



Promoting penal
reform worldwide

ՈՉ ՖՈՐՄԱԼ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ
ՎԱՅՐԵՐՈՒՄ. ՆՈՒԲԱՐԱՇԵՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ

2017 թ.

Նախաբան

Բանտային ենթամշակույթի մասին սույն հետազոտությունն իրականացվել է Քաղաքացիական հասարակության ինստիտուտի (ՔՀԻ) պատվերով, «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության կողմից իրականացվող՝ «Խոշտանգումների և վատ վերաբերմունքի նվազեցումը Հայաստանում և Վրաստանում կանխարգելիչ մշտադիտարկման մեխանիզմների հզորացման միջոցով» ծրագրի շրջանակներում: “Reducing torture and ill-treatment through strengthening preventive monitoring mechanisms in Armenia and Georgia’ funded by Penal Reform International.”

Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկվածների պահման պայմանները բազմիցս հայտնվել են իրավապաշտպան կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, որի արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք պատկան մարմինների անհապաղ արձագանքի կարիքն ունեն: Դրանցից մեկն, անկասկած, դատապարտյալների շրջանում փոխհարաբերությունների հատուկ համակարգն է՝ Հայաստանում գոյություն ունեցող ենթամշակույթներից ամենաձայրահեղականը և դաժանը:

Բանտային հարաբերությունների և «բանտային օրենքի» անհամապատասխանությունը մարդու իրավունքների ընդունված նորմերին և, ցանկացած իրավիճակում, մարդկային արժանապատվության պահպանման սկզբունքին բազմիցս դարձել են քրեակատարողական հիմնարկների խնդիրներով մասնագիտացած կազմակերպությունների կողմից քննարկման առարկա:

Մինևս սույն ժամանակ, իրավապաշտպան կազմակերպությունների ուսումնասիրությունները հիմնականում սահմանափակված են եղել իրենց գործունեության շրջանակով:

Մարդու իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմներ ուսումնասիրում են այն գործոնները, իրավական քաղաքականությունը և պրակտիկան, որոնք հանգեցնում են ՔԿՀ-ներում ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգի արմատանալուն և առաջարկում են ի հայտ եկած խնդիրների լուծման իրավական ուղիներ: Արդյունքում, նման հետազոտությունները և զեկույցները զուտ իրավական բնույթ են կրում և ոչ ֆորմալ հարաբերությունները դիտարկում են որպես պետության վարած քրեական քաղաքականության ոլորտի բացթողումներից մեկը: Դրանից ելնելով՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտն իր առջև խնդիր չի դրել համարել նմանատիպ հետազոտությունների և հրապարակումների շարքը:

Այնուամենայնիվ, ազատազրկվածների վրա բանտային ենթամշակույթի ազդեցությունը նվազեցնելու ուղիները գտնելու համար անհրաժեշտ է որոշել, թե որքանով է այն ընդունվում ինչպես բանտարկյալների, այնպես էլ՝ ՔԿՀ-ների աշխատողների կողմից, ինչպես նաև՝ դրա պահպանման հարցում նրանց ներգրավվածության մակարդակը և պատճառները: Այդ իսկ պատճառով՝ ՔՀԻ պատվերով իրականացված սույն հետազոտության նպատակն էր ուսումնասիրել հենց ազատազրկվածների վերաբերմունքը ոչ ֆորմալ հարաբերությունների՝ գոյություն ունեցող համակարգի նկատմամբ:

Աշխատանքային խմբում ներգրավված չի եղել որևէ իրավաբան կամ իրավապաշտպան, այլ եղել են միայն սոցիոլոգներ, որոնց առջև դրված խնդիրը եղել է հնարավորինս խորությամբ ներթափանցել ՔԿՀ-ներում գոյություն ունեցող ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգի

էության մեջ այնպես, ինչպես դա պատկերացնում են հարցվողները՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի նախկին բանտարկյալները:

Հետազոտությունը չի պատասխանում այն հարցին, թե բանտային ենթամշակույթի գոյությունը ինչքան բացասաբար է ազդում ՔԿՀ-ներում օրենքի և կարգ ու կանոնի պահպանման վրա:

Ելնելով վերոնշյալից՝ հարկ է նշել հետազոտության հետևյալ մեկնարկային կետերը.

- ուսումնասիրության հիմքում ընկած են նախկինում «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկված հարցվողների պատկերացումները,

- առանձին չեն նշվում գոյություն ունեցող քրեաիրավական նորմերի, այդ թվում նաև՝ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հացվողների պատկերացումների անհամապատասխանությունները,

- գոյություն ունեցող համակարգի ընդունումը և արդարացումը հարցվողների տրամադրվածության և համոզմունքների արտահայտումն է, որը հաճախ դառնում է բանտային ծանր պայմաններում զոյատնելու և անհատականության ու ինքնահարգանքի պահպանման միջոց,

- հետազոտությունը չի պարունակում նկարագրվող իրավիճակների իրավական վերլուծություն և զերծ է մնում նշված փաստերի իրավաչափության կամ իրավական բնույթի մասին որևէ եզրակացություն անելուց:

Այսպիսով, ընթերցողին է ներկայացվում նկարագրողական բնույթի սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն է խրախուսել պետությանը քրեաիրավական ոլորտում՝ բանտային ենթամշակույթի ցանկացած դրսևորման դեմ պայքարում վարելու ավելի մտածված և հետևողական քաղաքականություն: Հետազոտության վերջնական պատակն է ի հայտ բերել այն թաքնված գործոնները, որոնց վրա պետք է իրավական, սոցիալական, տնտեսական մեխանիզմների համակողմանի ազդեցություն գործադրել, և որոնք կոչված են չեզոքացնելու և բացառելու ֆորմալ օրենսդրությունից և նորմերից բացի որևէ այլ օրենքի գոյության անհրաժեշտությունը քրեակատարողական համակարգում:

Հարկ է հաշվի առնել, որ ենթամշակույթի փիլիսոփայությունը հիմնվում է իր կրողների կողմից աջակցության վրա, և քրեակատարողական քաղաքականությունը կարող է բերել ՔԿՀ-ներում լարվածության և բռնության դեպքերի շատացմանը:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտն այն դիրքորոշումն ունի, որ բանտային աշխարհում օրինականության խիստ ռեժիմի հաստատմանը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին կարելի է հասնել միայն այնպիսի մեթոդներով, որոնք հաշվի են առնում ազատազրկման վայրերում գերիշխող ենթամշակույթի առանձնահատկությունները:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ

Ներածություն

Զեկույցը կազմված է Քաղաքացիական հասարակության ինստիտուտի համար Երևանում 2017թ մարտ և ապրիլ ամիսներին անցկացված հետազոտության հիման վրա:

1. Հետազոտության խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակն էր տեղեկություններ հավաքել Հայաստանի ազատագրկման վայրերում առկա ոչ ֆորմալ հարաբերությունների փորձի վերաբերյալ: Դիտարկվել են հարաբերություններն ինչպես ազատագրված անձանց շրջանում, դատապարտյալների և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջև, այնպես էլ՝ դատապարտյալների հարաբերությունները հիմնարկից դուրս գտնվող որոշ անձանց հետ (մի կողմից՝ քրեական աշխարհի ներկայացուցիչների, մյուս կողմից՝ դատապարտյալների ընտանիքների և մտերիմների): Հավաքագրվող տեղեկությունները վերաբերում էին ինչպես ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգի կառուցվածքին և գործունեությանը, այնպես էլ՝ դրա ազդեցությանը դատապարտյալների կյանքի վրա տարբեր տեսանկյուններից, ներառյալ՝ անվտանգության, առողջության, հոգեբանական վիճակի, սոցիալական կապերի, կենցաղային պայմանների, ֆինանսական ծախսերի և այլն:

Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում գոյություն ունեցող ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգի զարգացած և արմատացած լինելու, հիմնարկների վարչակազմի կողմից դրա խրախուսման և սեփական աշխատանքի կազմակերպման նպատակով օգտագործելու մասին վերջին տարիներին բավականին շատ է գրվել, այդ թվում՝ մամուլում, իրավապաշտպան կազմակերպությունների, տարբեր հանձնաժողովների, մշտադիտարկող և վերահսկող մարմինների զեկույցներում¹:

Սակայն զուտ ոչ ֆորմալ բանտային պրակտիկայի վերաբերյալ առանձին հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում չի անցկացվել, այդ իսկ պատճառով «գողական օրենքի» և քրեակատարողական հիմնարկներում ոչ ֆորմալ հարաբերությունների մասին առկա պատկերացումները նույնացվում են խորհրդային շրջանից հայտնի կամ այլ երկրներում, առաջին հերթին՝ Ռուսաստանում գոյություն ունեցող փորձի հետ: Մինչդեռ գրեթե 30 տարի է անցել, ինչ Հայաստանի քրեակատարողական համակարգն առանձնացել է ընդհանուր խորհրդային համակարգից: Այդ տարիների ընթացքում Հայաստանի

¹ Տես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձեռքբերված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2015 թվականի գործունեության մասին հաշվետվությունը, <http://www.police.am/images/6261arm-Police-Group2015-annual-report-original-2-1.pdf>; Concluding observations on the fourth periodic report of Armenia. UN Committee Against Torture. 26.01.2017,

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En ; Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f>;

«Քրեական ենթամշակույթը բանտերում հանգեցնում է բռնության, խտրականության և վատ վերաբերմունքի դրսևորումների», hra.am, 30.01.2017 <http://hra.am/hy/point-of-view/2017/01/31/torture>;

հասարակությունն ու պետությունը բավական փոխվել են, սերնդափոխություն է տեղի ունեցել, և բանտային ոչ ֆորմալ հարաբերությունները չէին կարող նույնը մնալ:

Հետազոտության վարկածն այն էր, որ ներկայումս հայաստանյան բանտային միջավայրում գործում է ոչ ֆորմալ հարաբերությունների յուրահատուկ համակարգ և հատուկ մեխանիզմ քրեակատարողական հիմնարկների վարչակազմին և հիմնարկից դուրս գտնվող անձանց (դատապարտյալների ընտանիքի անդամներին և ընկերներին, քրեական աշխարհի ներկայացուցիչներին և նրանց սպասարկող ենթակառուցվածքներին) դրա մեջ ներգրավելու համար:

Հայաստանում քրեակատարողական համակարգում իրականացվող և նախատեսվող բարեփոխումների արդյունավետությունը կախված է այդ թվում նաև բանտերի ներսում առկա ոչ ֆորմալ հարաբերությունների բնույթը հասկանալուց: Այդ հարաբերությունները և դրանց ձևափոխումը սահմանափակելու, դրա վնասները նվազագույնի հասցնելու գործուն միջոցների բացակայության դեպքում, ո՛չ բարեփոխումները, ո՛չ էլ վերահսկման փորձերը չեն կարող բերել ցանկալի արդյունքների, ինչը կապացուցենք սույն հետազոտության մեջ:

Հետազոտության խնդիրներից է մանրամասն նկարագրել Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում առկա ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգը՝ հաշվի առնելով վարչակազմի և արտաքին աշխարհի հետ փոխհարաբերությունները, ինչպես նաև՝ բացահայտել, թե ինչպես են ոչ ֆորմալ հարաբերություններն արտահայտվում դատապարտյալների կենսագործունեության տարբեր ոլորտներում և ինչ հետևանքների են բերում:

2. Մեթոդաբանություն

Քանի որ սույն հետազոտությունը փորձնական է, իսկ առկա հրապարակումների համաձայն (տե՛ս էջ 1-ի հղումներում)՝ ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում տարբեր են՝ կախված վարչակազմի վարած քաղաքականության առանձնահատկություններից, որոշվել է սահմանափակվել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ «Նուբարաշեն» ՔՀԿ) փորձի ուսումնասիրությանը: Դա թույլ տվեց մեկ ամսվա ընթացքում փոքրածավալ նյութի հիման վրա, հարցվողների դժվար հասանելիության պայմաններում, ոչ միայն հավաքել, այլ նաև ստուգել հետազոտության առարկայի վերաբերյալ տեղեկությունները:

«Նուբարաշեն» ՔՀԿ-ն ընտրվեց այն պատճառով, որ այնտեղ են պահվում նախնական կալանքի տակ գտնվող անձանցից շատերը, այդ պատճառով նրանց զգալի մասը դատապարտվելուց հետո տարբեր քրեակատարողական հիմնարկներում հայտվելիս արդեն իսկ ունենում է որոշակի համակարգային պատկերացում և պրակտիկ փորձ՝ ձեռք բերված «Նուբարաշենում»: Հետևաբար, բանտային ոչ ֆորմալ հարաբերությունների նվազեցման փորձերը պետք է սկսվեն հենց «Նուբարաշեն» ՔՀԿ-ից:

Որպես հետազոտական մեթոդ է ընտրվել բանավոր պատմությունների մեթոդը, որը թույլ է տալիս շատ և բազմակողմանի տեղեկություններ ստանալ ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ՝ հարցազրույցի ընթացքում բացահայտելով այնպիսի խնդիրներ ու երևույթներ, որոնց մասին հետազոտողը նախապես չգիտեր: Հարցվողներին առաջարկվել է անանունության սկզբունքով պատմել «Նուբարաշեն» ՔՀԿ-ում պահվելու ժամանակահատվածի մասին՝ սկսած բանտ մուտք գործելու պահից մինչև ազատ արձակվելու կամ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու պահը: Հարցազրույցավարներն աշխատել են հնարավորինս քիչ միջամտել կամ

ընդհատել՝ հարցվողներին թույլ տալով պատմել իրենց փորձի մասին՝ կենտրոնանալով իրենց իսկ համար կարևոր իրադարձությունների և տպավորությունների վրա:

Հարցազրույցների ընթացքում օգտագործվել է մասնավորեցնող հարցերի ցուցակ (այդ թվում՝ բռնություն, կոնֆլիկտներ, հիերարխիա, սնունդ, քուն, հիգիենա, բժշկական օգնություն, զբոսանքներ, մոլախաղեր, թմրանյութեր, հանձնուքներ, հանդիպումներ և այլն), որը լրացվել է յուրաքանչյուր հարցազրույցից հետո: Հարցազրույցները վերլուծվել են դաշտային փուլին զուգահեռ, և ստացված տվյալները վերաստուգվել են ամեն հաջորդ հարցազրույցի ընթացքում: Հետազոտության վերջում հարցվողներից մեկի հետ իրականացվել է կրկնակի հարցազրույց՝ տվյալների հստակեցման և վարկածների ստուգման նպատակով:

Հետազոտության համար որպես հարցվող ընտրվել է 5 տղամարդ¹, ովքեր 2012-2017թթ. ընկած հատվածում վեց ամսից մեկ տարի ժամկետով ազատազրկված են եղել «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: Ընտրվել են ազատության մեջ գտնվող անձինք, ովքեր կարող են համեմատաբար ազատ խոսել իրենց փորձի մասին՝ առանց վախենալու հիմնարկի վարչակազմի կամ դատապարտյալների հետ հարաբերությունները փչացնելուց: Բոլոր հարցվողները նախնական կալանքի տակ են եղել «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 6-ից 8 ամիս: Հարցվողների մի մասի գործերը չեն հասել դատարան, և նրանք ազատ են արձակվել: Նրանք, ում գործերը հասել են դատարան և ավարտվել են մեղադրական դատավճռով, մնացել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ևս 2-3 ամիս՝ արդեն դատապարտվածների համար նախատեսված բանտախցերում: Հարցվողների մի մասը դատավճռից հետո տեղափոխվել է այլ քրեակատարողական հիմնարկ, սակայն հարցազրույցի ընթացքում նրանց խնդրել են պատմել միայն «Նուբարաշենի» մասին:

Հարցվողների ընտրությունն իրականացվել է ձևակույտի մեթոդով՝ օգտագործելով հետազոտողների անձնական և մասնագիտական կապերը: Չնայած ընտրության սահմանափակ հնարավորությանը, փորձ է արվել ապահովել հարցվողների բազմազանություն: Հարցվողների տարիքը հարցազրույցի անցկացման պահին եղել է 23-ից 60 տարեկան, իսկ «Նուբարաշենում» ազատազրկման պահին՝ 20-ից 58 տարեկան: Հարցվողների կրթությունը եղել է տարբեր՝ միջնակարգից մինչև գիտական աստիճանի առկայություն, նրանց մեջ եղել են տարբեր մասնագիտություններ ունեցող անձինք, եկամուտը տատանվել է ցածրից մինչև միջինից բարձր: Հարցվողներին ներկայացված մեղադրանքները եղել են տարաբնույթ (գողություն, կողոպուտ, խարդախություն, թմրանյութերի վաճառք, զանգվածային անկարգություններին մասնակցություն): Բոլոր հարցվողները «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվել են տարբեր բանտախցերում, ինչը թույլ տվեց հավաքել ավելի լիարժեք տեղեկություններ՝ հաշվի առնելով բանտախցերի կարգավիճակների և կենցաղային պայմանների տարբերությունները:

3. Հետազոտության սահմանափակումները

Հիմնական սահմանափակումները կապված են կիրառված մեթոդի յուրահատկության, հետազոտության մասշտաբների սահմանափակման և որոշակի տիպի հարցվողների դժվար հասանելիության հետ:

Մեթոդաբանության հետ կապված սահմանափակումները կայանում են նրանում, որ բանավոր պատմությունների մեթոդը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել հետազոտվող ոլորտում առկա գործընթացների և երևույթների վերաբերյալ, սակայն հնարավորություն չի տալիս ստուգել կոնկրետ տեղեկությունների ճշմարտացիությունը: Հարցվողները միշտ չէ, որ պատմում են իրականությունը, հատկապես իրենց վարքի կամ փորձի մասին, և կարող են թաքցնել որոշ դրվագներ: Բացի այդ, նրանք ոչ միշտ են հստակ տարբերակում այն, ինչ տեսել են իրենց աչքերով,

¹ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվում են միայն տղամարդիկ:

և այն, ինչի մասին լսել են ուրիշներից: Հաշվի առնելով, որ ազատագրկման մեջ գտնվելը ծանր սթրես է, և հիշողությունները կարող են ձևափոխվել կամ ջնջվել գիտակցությունից, զեկույցի մեջ ներառվել են հիմնականում այն տվյալները, որոնք համընկել են բոլոր կամ մի քանի հարցազրույցներում: Այնտեղ, որտեղ հարցվողների պատմությունների միջև եղել են զգալի տարբերություններ, այդ մասին հատուկ նշվում է:

Կային աշխատանքի ծավալների և հարցվողների հասանելիության հետ կապված սահմանափակումներ, որի հետևանքը հետազոտվող ոլորտի խնդիրների ոչ ամբողջական ընդգրկումն է: Հետազոտության ընթացքում չհաջողվեց հարցազրույց իրականացնել մի քանի ենթադրյալ ռիսկային խմբերի ներկայացուցիչների հետ, մասնավորապես՝ սեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտվածների, ինչպես նաև՝ նույնասեռականների հետ: Նշված խմբերի ներկայացուցիչները բանտից դուրս գալուց հետո շրջապատից թաքցնում են իրենց, հավանաբար, ծայրահեղ տրավմատիկ բանտային փորձը, իսկ ազատագրված ժամանակ բանտային հիերարխիայում զբաղեցրած ցածր դիրքի պատճառով անմիջական շփում չեն ունենում այլ խմբերի դատապարտյալների հետ, այդ պատճառով նրանց հնարավոր չէ բացահայտել ձևակույտի մեթոդով: Հետևաբար, այդ խմբերի վրա ոչ ֆորմալ հարաբերությունների ազդեցությունը զեկույցում ներկայացված է ոչ ամբողջական՝ միայն անուղղակի տեղեկությունների հիման վրա, և այդ ոլորտին վերաբերող եզրակացություններ անելիս պետք է շատ զգույշ լինել:

Բացի այդ, հաշվի առնելով քրեական աշխարհի փակ բնույթը, հետազոտողների համար հասանելի չեն եղել գողական հիերարխիայի վերին օղակները: Հարցվողների շարքում եղել է միայն մեկ կրկնահանցագործ, ով կալանավորված է եղել ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, սակայն այստեղ գողական «կարիերա» չի արել: Բարձր կարգավիճակ ունեցող գողականների գործունեության և կենսակերպի մասին տվյալները առաջին ձեռքից չեն, քանի որ բոլոր հարցվողները գտնվել են բանտային հիերարխիայի ցածր և միջին օղակներում, և գրեթե շփում չեն ունեցել գողական համայնի վերին օղակների հետ:

Ոչ ֆորմալ հարաբերությունները «Նուբարաշեն» ՔԿՀ-ում

1. **Էթիկա և հիերարխիա.** «պոագոն», «նայողներ», «պալաժենեցներ» Բանտ մուտք գործելուն պես բանտարկյալը բախվում է այնտեղ գործող ոչ ֆորմալ հարաբերությունների համակարգի հետ, որի նկարագրության համար կիրառվում է հատուկ տերմինաբանություն՝ հիմնականում աղավաղված կամ փոխառված ռուսերեն բառեր և արտահայտություններ, որոնք ստորև կներկայացվեն շեղատառ: Ընդունված է համարել, որ հայկական բանտերում ոչ ֆորմալ հարաբերությունները խորհրդային ռեժիմի ժառանգություն են ստալինյան ժամանակաշրջանի զանգվածային ճամբարներից մնացած, և տերմինների ռուսական ծագումը դրա ապացույցն է: Այդ հարաբերությունների հիմքում ընկած է խորհրդային ժամանակաշրջանի գողական օրենքը՝ էթիկական որոշակի համակարգ, որը կառուցված է գողականների հանդեպ լոյալության, ոչ գողականների հանդեպ արհամարհրանքի և խիստ հիերարխիայի վրա՝ ինչպես խմբերի միջև, այնպես էլ դրանց ներսում: Խորհրդային գողական էթիկան ընդունված էր ռոմանտիկացնել², չնայած որ այն հիմնված էր այդ կանոնները խախտողների նկատմամբ կիրառվող բռնության (այդ թվում նաև՝ դաժան,

² Գողական ռոմանտիկայի գրավչության և կեղծիքի մասին գրել է մասնավորապես Վարլամ Շալամովը: Տե՛ս՝ Վարլամ Շալամով, Հանցավոր աշխարհի ընդհանուր նկարագիրը, «Էքսմո» (Մոսկվա 2009):

ընդհուպ մինչև սպանություն) և հիերարխիայի ստորին օղակների ներկայացուցիչների իրավազրկության վրա:

Հետազոտության ընթացքում ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ներկայումս Հայաստանում գործում է գողական օրենք (պռագոն), որը տարբերվում է խորհրդային նախատիպից թե՛ էթիկական սկզբունքներով, թե՛ հիերարխիայի կառուցվածքով, թե՛ դրա աջակցության և բանտի վարչակազմի հետ փոխհարաբերությունների առումով:

Ինչպես բացատրեց երիտասարդ հարցվողներից մեկը (25 տարեկան), ով առաջին անգամ գողական հարաբերությունների հետ բխվել էր բանտում, սակայն ազատ էր արձակվել և անմիջականորեն չէր առնչվել գողական համայնքի հետ, հայկական գողական օրենքը «պահանջում է առաջին հերթին հարգել դիմացիներին, ոչ մեկին չվիրավորել, կռիվ չսարքել, պահպանել մաքրություն և կարգուկանոն, բայց, միաժամանակ, հարգանք ունենալ սեփական անձի նկատմամբ»: Գողական և սովորական մարդկանց հակադրությունն, ըստ հարցվողների, սուր չէ: Գողական աշխարհի հետ կապ չունեցող ավելի մեծահասակ հարցվողի (45 տարեկան) խոսքերով՝ «Եթե դու մուժիկ ես, այսինքն՝ գողական չես, բայց հարգում և պահպանում ես օրենքը, ապա քեզ հարգում են ու քեզ հետ հաշվի են նստում»: Ընդ որում, նշանակություն չունի բանտարկյալի տարիքը, կրթությունը, ֆիզիկական հնարավորությունները, սոցիալական կարգավիճակն ու ծագումը: Պռագոնը խիստ է գործում միայն նույնասեռականների (կամ նրանց, ում որևէ պատճառով կհամարեն այդպիսին) նկատմամբ. նրանք հիերարխիայում զբաղեցնում են ամենացածր դիրքը՝ անկախ այլ որակներից: Նույնասեռականներին են հավասարվում (կամ համաձայն որոշ հարցվողների՝ «գրեթե հավասարվում են») պռագոնը կոպտորեն խախտած դատապարտյալները՝ թռածները:

Հարցվողների խոսքերով՝ հողվածը, որով մեղադրվել է դատապարտյալը, նույնպես էական դեր չի խաղում: Ենթադրաբար, խորհրդային տարիներին գոյություն ունեցող պրակտիկան, որը նույնասեռականներին էր հավասարեցնում սեռական բնույթի հանցագործությունների (բռնաբարություն, մանկապղծություն) համար դատապարտվածներին, ներկա պահին չի գործում կամ, համենայն դեպս, խիստ չէ դատարանների նկատմամբ համընդհանուր անվստահության պատճառով: Ենթադրվում է, որ մեղադրանքը կարող է կեղծված լինել քննչական մարմինների կամ հայցվորների կողմից, և միայն դատապարտման փաստը բավական չէ կարգավիճակի ցածրացման համար. հարկավոր են լրացուցիչ ապացույցներ: Անուղղակի տվյալների համաձայն՝ բացասական վերաբերմունք է պահպանվում բառիզների (թմրանյութեր վաճառողների) հանդեպ, սակայն հարցվողները նման դեպքերի հետ անձամբ չեն առնչվել:

Գողական էթիկայում գլխավոր դեր են խաղում «ոգին», անձնային որակները՝ արժանապատվությանը, վճռականությունը, ինքնավստահությունը, սեփական դիրքորոշումները պաշտպանելու պատրաստակամությունը, կոնֆլիկտներ լուծելու, կարգը պահպանելու և այլ անձանց կարգապահությունը վերահսկելու կարողությունը: Այս իրավիճակում խոցելի դիրքում են հայտնվում թուլական, վախկոտ, իրեն պաշտպանել չկարողացող, ինչպես նաև՝ խցակիցների համար անհարմարություններ ստեղծող՝ անհաշտ և փնթի մարդիկ: Դատապարտյալը կարող է հայտնվել հիերարխիայի ստորին օղակում նաև տեղեկությունների հավաքման և փոխանցման ոչ ֆորմալ համակարգի գործելու պատճառով: Հարցվողների խոսքերով՝ գողական աշխարհի՝ ազատության մեջ գտնվող ներկայացուցիչները բանտային հեղինակությունների պահանջով տեղեկություններ են հավաքում յուրաքանչյուր նորեկ դատապարտյալի մասին նրա բակից, հարևաններից, գործընկերներից և դասընկերներից, հարցնում են նրա անցյալի, ընկերների, զբաղմունքների, կապերի և կենսակերպի վերաբերյալ: Եթե այդ անձի վերաբերյալ բացահայտվի գողական էթիկայի տեսանկյունից որևէ անընդունելի

երևույթ, նրա համար կարող է շատ բարդ կամ անհնար լինել բանտային միջավայրում հաստատվելը, հատկապես եթե այդ տեղեկությունը վերաբերի գողականների կողմից չընդունվող սեռական վարքին:

Հարցվողների խոսքերով՝ բռնությունը պոռագոնի կիրառման հիմնական կամ նույնիսկ կարևոր մեթոդը չէ: Բոլոր հարցվողները, բացի մեկից, պնդել են, որ ոչ մի անգամ կռվի ակնաստես չեն եղել: Ընդհանուր առմամբ, հարցվողների պատմություններից հետևում է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գողական հիերարխիան ավելի շատ գործում է տարբեր բանտախցերի միջև, քան մեկ բանտախցի ներսում գտնվողների միջև: Դատապարտյալներին բանտախցերում տեղավորելիս վարչակազմը համագործակցում է գողական հեղինակությունների հետ, հաշվի է առնվում տվյալ անձի կարգավիճակը՝ գողական կամ սովորական աշխարհում, նրա ֆինանսական հնարավորությունները, անցյալը, անձը, մասնագիտությունը և այլն:

Բանտախցերը տարբերվում են իրենց նյութական և բարոյական կարգավիճակով՝ արտոնություններից օգտվելու, գերբնակեցվածության աստիճանի, կենցաղային պայմանների, ինչպես նաև՝ վարչակազմի և գողական հեղինակությունների կողմից եղած վերաբերմունքի (որն, ըստ հարցվողների, միշտ համընկնում է իրար) տեսանկյունից: Ընդ որում, բարձր կարգավիճակ ունեցող բանտախուցը կարող է լինել համեմատաբար ոչ բարեկեցիկ, իսկ հարուստ բանտախուցը՝ ոչ ամենաբարձր կարգավիճակ ունեցող:

Բանտում գործող ոչ ֆորմալ օրենքների համատեքստում բանտախցի կարգավիճակը մեծ մասամբ կախված է դատապարտյալների վարքից, նայողի կարգավիճակից և վարքից, այսինքն՝ բանտախցի գողական հեղինակությունից: Հնարավոր է ունենալ բարձր կարգավիճակ՝ միաժամանակ չկատարելով մեծ ծախսեր բարեկարգման և կաշառքի վրա: Այնուամենայնիվ, ցածր կարգավիճակ ունեցող բանտախցերը, համաձայն հարցվողների խոսքերի, միշտ աղքատ են: Ինչ վերաբերում է ամենաբարձր կարգավիճակի բանտախցերին, դրանց մասին հավաստի տեղեկություններ հավաքել զրեթե չի հաջողվել, քանի որ հարցվողներից ոչ մեկ նման բանտախցում չի եղել, սակայն շատերը լսել են, որ այնտեղ շքեղ է, և դրանցից մեկում «նույնիսկ ջակուզի կա»:

Համարվում է, որ որքան բարձր է բանտախցի գողական կարգավիճակը, այնտեղ այնքան բարձր է «կարգապահությունը» և քիչ է բռնությունը: Հարցվողներից միայն մեկը՝ աղքատ, ցածր կարգավիճակ ունեցող բանտախցում նստած երիտասարդ, ասել է, որ իր բանտախցում երբեմն կռիվներ էի լիում երիտասարդերի միջև, և նայողը միանգամից չէր բաժանում կռվողերին, սակայն թույլ չէր տլիս, որ բանը հասնի լուրջ վնասվածքներին, և բաժանում էր առանց ուժի կիրառման՝ խոսքի միջոցով, որին բոլորը ենթարկվում էին:

Մեկ այլ հարցվող, ով ուներ բարձրագույն կրթություն և ազատագրվելուց առաջ զբաղեցրել էր դեկավար պաշտոն, սկզբում ուղարկվել է ոչ գողական, ցածր կարգավիճակ ունեցող բանտախուց, որտեղ պահվում էին պետական պաշտոնյաներ, ինտելիգենտներ և այլն: Սակայն նրան չեն գոհացրել խցի վատ կենցաղային պայմանները, գերբնակեցվածությունը և ռեսուրսների անհասանելիությունը, և նա ծանոթների միջոցով խնդրել է ադմինիստրացիային իրեն տեղափոխել գողական բանտախուց: Նոր բանտախցում նա մնացել է մինչև ազատ արձակվելը, իր խոսքերի համաձայն՝ ձեռք է բերել բարձր կարգավիճակ և հաճույքով սովորեցրել երիտասարդներին բանտային կարգերը: Նա ասել է. «Ոչ մի աշխատանքային կոլեկտիվում ես ինձ այդքան լավ չեմ զգացել, որքան այդ բանտախցում: Դրանցից ոչ մեկում այդքան լավ չէին պահպանվում համակեցության կանոնները: Այդ բանտախցում ես նույնիսկ ստիպված եղա հետևել խոսքիս, քանի որ իմ հրամայական տոնի համար՝ «աղը փոխանցի՛ր», նայողն ինձ նկատողություն արեց, և ես սկսեցի ավելի զգույշ արտահայտվել»:

Նույնասեռականների և պռագոնը խախտողների՝ թռածների նկատմամբ բռնությունը ևս ինստիտուցիոնալացված չէ. այն փոխարինվում է մեկուսացմամբ, ստորացմամբ և շահագործմամբ: Նրանց ֆիլտրացնում են բաշխման փուլում և տեղավորում են հատուկ բանտախցերում, որտեղ հարցվողներն, իրենց խոսքերով, երբեք չեն եղել, սակայն լսել են, որ այնտեղ կենցաղային պայմաններն ամենավատն են, բարիքներից հնարավոր չէ օգտվել, «չկա կարգապահություն», հնարավոր է բռնությունը բանտարկյալների միջև, «քանի որ չկա նայող և չի գործում պռագոնը»: Նույնը վերաբերում է թռածների խցերին. հարցվողների մի մասի խոսքով՝ դրանք նույն բանտախցերն են, մյուսները կարծում են, որ տարբեր են: Հարցվողներից երկուսը պնդել են, որ այդ բանտախցերից մարդկանց էին բերում (թռածներին կամ միասեռականներին կամ միաժամանակ և՛ նրանց, և՛ մյուսներին) իրենց զուգարանները մաքրելու համար: Մյուս հարցվողները, այդ թվում՝ բարձր կարգավիճակ ունեցող բանտախցերից, նշել են, որ զուգարանը իրենք են մաքրել (խցակիցներով):

Բոլոր հարցվողները, բացի տարիքով ամենամեծից, համոզված էին, որ հայկական պռագոնի համաձայն բռնաբարությունը նախատեսված չէ որպես պատժիչ միջոց զանցանքների համար՝ ի տարբերություն խորհրդային և ռուսաստանյան իրականության, քանի որ նման պատիժ իրականացրած անձը կհայտնվի ցածր կարգավիճակում և կհավասարեցվի նույնասեռականին: 60 տարեկան հարցվողը համարում էր, որ պռագոնում բռնաբարությունը մնացել է խորհրդային ժամանակներից, սակայն պրկտիկյում չի կիրառվում Հայաստանի գողական աշխարհում ցանկացած տեսակի միասեռական կապերի հանդեպ գոյություն ունեցող անհանդուրժողականության պատճառով: Ինքը՝ հարցվողը չի լսել «Նուբարաշենում» բռնաբարության դեպքերի մասին, սակայն նման դեպքերի վերաբերյալ առկա են բժշկական վկայություններ (բուժզննման տվյալներ): Հնարավոր է, որ նման հանցագործությունները «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կատարվում են գաղտնի կերպով՝ բացահայտ գողական էթիկայի շրջանակներից դուրս:

Ավելին, հարցվողներից ոչ մեկը վկա չի եղել ոչ միայն սեռական, այլև ցանկացած այլ տեսակի բռնության՝ որպես գողական օրենքի կիրառման գործիք: Ամենախիստ պատիժը, որին ներկա են եղել հարցվողները, դատապարտյալին ավելի ցածր կարգավիճակ ունեցող բանտախուց տեղափոխելն է եղել: Բոլոր հարցվողները առնչվել են նման դեպքերի հետ կամ մասնակից են եղել: Այդպես էր լինում, երբ, օրինակ, նոր դատապարտյալը չէր հարմարվում խցակիցների կամ նրանցից մեկի հետ, կռիվներ էր հրահրում, վիրավորում էր որևէ մեկին, հրաժարվում էր հետևել կանոններին: Երբեմն վերաբնակեցնում էին ոչ թե վիրավորողին, այլ նրան, ում նա վիրավորել էր, քանի որ վերջինս չի կարողացել պաշտպանել իրեն և այդ պատճառով դարձել է անցանկալի մարդ կոլեկտիվում: Կարող էին վերաբնակեցնել նաև նրան, ով չափից դուրս պատրաստակամ էր ծառայել մյուսներին՝ առաջարկում էր ուրիշների փոխարեն լվանալ սպասքը, մաքրել բանտախուցը և այլն: Երբեմն վերաբնակեցումը տեղի էր ունենում բանտախցի նայողի և ադմինիստրացիայի պայմանավորվածությամբ, երբեմն նաև բանտի գլխավոր գողական հեղինակության՝ պալաժենեցի միջնորդությամբ. պալաժենեցի հետ կապը հաստատվում էր հեռախոսով, հսկիչի միջոցով երկտողերի փոխանցմամբ կամ առանձնակի խնդրահարույց դեպքերում պալաժենեցը անձամբ էր գալիս խնդիրը լուծելու:

Հարցվողներից մեկը պատմում էր, որ մի օր իրենց՝ չափավոր գողական կարգավիճակ ունեցող բանտախուց բերեցին մի տարեց մարդու, ում հենց ծանոթության ընթացքում հարցվողը կասկածեց, որ նա նույնասեռական է (կասկածի պատճառը չկարողացավ նշել): Քանի որ այդ մարդը «ոչ ընդունում էր, բայց ոչ էլ վճռականորեն ժխտում էր» նույնասեռական լինելը, դատապարտյալները ադմինիստրացիային խնդրեցին նրան տեղափոխել այլ բանտախուց:

Ենթադրվող նույնասեռականը երկու օր անցկացրեց խցի՝ զուգարանի մուտքի աստիճաններին նստած, մինչև ադմինիստրացիան ընունեց դատապարտյալների պահանջը և տարավ այդ մարդուն (իսկ թե ուր՝ չգիտեն):

Հարցվողներից ոչ ոք ներկա չի եղել պռագոնի խախտման համար որևէ մեկին թռածների բանտախուց տեղափոխելուն: Համարվում է, որ դա բացառիկ դեպքերում կիրառվող ծայրահեղ պատիժ է, և հարցվողները չեն կարողացել ասել, թե ինչ է պետք անել այդպիսի պատիժ ստանալու համար: Հարցվողներից մեկի խոսքերով՝ թռած կարելի է դառնալ, օրինակ, հարազատների կողմից հանձնուքի միջոցով թմրանյութ ստանալու փորձի համար, քանի որ բացահայտման դեպքում բոլոր հանձնուքները մանրակրկիտ ստուգման կենթարկվեն «կսկսեն տոլմաները քանդել, տորթերը ծակծկել»: Այդ հարցվողի պատժի կրման ընթացքում (20132014թթ.) հանձնուքների ստուգումներ չեն եղել. իր խոսքերով՝ դա պայմանավորված էր գողական հեղինակությունների և հիմնարկի վարչակազմի միջև պայմանավորվածությամբ, համաձայն որի՝ վարչակազմը մենաշնորհ է ստանում կաշառքի դիմաց արգելված ապրանքներ և նյութեր մատակարարել, իսկ դատապարտյալները իրենց հանձնուքները ստանում են ամբողջական և անվնաս տեսքով: Դժվար է ասել, թե որքանով են այս տվյալները հավաստի, այնուամենայնիվ, ինչպես կերևա հետագա նկարագրությունից, դրանք համապատասխանում են ադմինիստրացիայի և

գողականների փոխհարաբերությունների ընդհանուր տրամաբանությանը:

Բանտախցերի ներսում հիերարխիան վերաբերում է միայն կարգուկանոնի հաստատման իրավունքին: Նայողներն իրենց դիրքից օգտվում են միայն վեճերի լուծման և գողական օրենքի խախտումների կանխարգելման նպատակով: Հարցվողների խոսքերով՝ իրենց խցերի նայողները մյուսների հետ հավասար մասնակցում էին բանտախուցը մաքրելու գործընթացին: Նայողները մնացածի հետ կիսվում էին ուտելիքով և ծխախոտով, ոչ մեկին չէին խնդրում կամ պարտադրում իրենց սպասարկել: «Մեզ մոտ այնպես չէր, ինչպես բանակում, ոչ մի զապադլո, միասին ուտելիք էինք պատրաստում, միասին լվանում էինք սպասքը և հավաքում բանտախուցը»:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում պռագոնի այդքան սահուն գործելը ապահովում է դատապարտյալների կողմից ընդունվող և վարչակազմի կողմից աջակցություն ստացող հիերարխիկ կառուցվածքը: Հիմնարկի ամենաբարձր գողական հեղինակության՝ պալաժենեցի դերը հետևյալն է՝ գողական օրենքի խախտման համար պատիժների սահմանում, վեճերի և կոնֆլիկտների լուծում (խոսքը այն վեճերի և կոնֆլիկտների մասին է, որոնք չեն կարողանում կարգավորել նայողները), բանտախցերում ազատագրկվածների բաշխման վերաբերյալ որոշումների կայացում, դատապարտյալներից դրամահավաքի՝ գրեֆի կազմակերպում և դրա վերաբաշխում, ինչպես նաև՝ հիմնարկի վարչակազմի հետ հարցերի համաձայնեցում: Պալաժենեցը կարող է ազատ շրջել բանտում և տարբեր կերպ ներգրավվել դրա ղեկավարման գործընթացում՝ գողական պատկերացումներին համապատասխանող բանտային կարգի և բանտարկյալների կեցության պայմանների ապահովման նպատակով: Հարցվողներից մեկն ասել է, որ տեսել է, թե ինչպես են պալաժենեցին ուտելիք բերել խցերով բաժանելուց առաջ, իսկ նա չի հավանել ուտելիքը և կարգադրել է նորը եփել:

Պալաժենեցը պահվում է հատուկ բանտախցում, որի ներքին կարգուկանոնի մասին հարցվողները միայն լսել են, և նրանց պատմածները միշտ չէ, որ համընկնում են: Պալաժենեցի բանտախուցը գտնվում է բանտի վերնի հարկերում, որոնք համարվում են առավել հարմարավետ: «Վերևում» են պահվում նաև այլ գողական հեղինակությունները³: Ըստ հարցվողների՝

³ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ամենավերնի հարկում պահվում են ցմահ բանտարկվածները, սակայն նրանց կենսակերպի վերաբերյալ նախաքննության տակ գտնվողներին գրեթե ոչինչ հայտնի չէ:

պալաժենեցի հետ բանտախուցը կարող են կիսել երկու-երեք հոգի, ովքեր իրենց կարգավիճակով նրան չեն զիջում: Որպես կանոն, նրանց նախապատրաստում են այլ քրեակատարողական հիմնարկներում պալաժենեցի դերը ստանձնելու համար կամ հիմնական պալաժենեցին փոխարինելու համար: Բացի այդ երկու-երեք հոգուց, պալաժենեցի հետ կարող է բնակվել ծառան (ճուտ), դատապարտյալ, ով ուտելիք է պատրաստում, մաքրություն անում և կատարում հանձնարարություններ: Հաշվի առնելով, որ ծառան կարող է լուրջ տեղեկատվության տիրապետել, լսել, թե որտեղ է գտնվում գողական դրամարկղը և այլն, նա «լուրջ ստուգում է անցնում. պատահական մարդու չեն թողնի մտնել պալաժենեցի բանտախուցը»:

Համաձայն պռագոնի՝ գողական հեղինակությունների կոմֆորտն ու պահանջմունքներն ապահովվում են ոչ թե բանտարկյալներից հավաքված գրեֆի հաշվին, այլ՝ հանցագործ աշխարհի՝ ազատության մեջ գտնվող ներկայացուցիչների կողմից առանց խոչընդոտների ուղարկվող փողի հաշվին: Գրեֆը կարող է օգտագործվել միայն վարչակազմի կաշառման և առավել կարիքավոր բանտախցերի պայմանների բարելավման համար: Ընդ որում, գրեֆը կատարվում է ինչպես կամավոր նվիրատվությունների ձևով, որոնց միջոցով բանտախցի բնակիչները փորձում են պալաժենեցի մոտ բարձրացնել իրենց կարգավիճակը, այնպես էլ՝ պալաժենեցի պահանջով: Մոլախաղերից ստացվող գումարի մի մասը նույնպես վճարվում է որպես գրեֆ: Վարչակազմը ոչ միայն չի խառնվում այդ գործընթացներին, այլև, ինչպես կնկարագրվի հաջորդ գլխում, ակտիվորեն օգտվում է դրանցից:

2. Վարչակազմի հետ համագործակցությունը

«Նուբարաշեն» ՔԿԶ-ի վարչակազմի և գողականների միջև ոչ ֆորմալ համագործակցությունն առաջինն է, ինչի հետ բախվում է կալանավորը: Սկզբում նա հայտնվում է այսպես կոչված կառանտինում՝ ժամանակավոր պահման համար նախատեսված, վատ կենցաղային պայմաններով տարածքում (կառանտինի մասին մանրամասները՝ ստորև առանձին մասում), որտեղ կալանավորները մնում են մինչև բանտախուց ուղարկվելը՝ պաշտոնապես առավելագույնը 7 օր ժամկետով, իսկ իրականում, ըստ հարցվողների, մի քանի ժամից մինչև 1 ամիս: Բանտախցերով բաշխման ամբողջ համակարգը լավագույնս ցույց է տալիս, թե ինչպես է վարչակազմն օգտագործում գողական օրենքը սեփական խնդիրների լուծման նպատակով: Բոլոր հարցվողները բանտախուց տեղափոխվելուց առաջ ազատության մեջ գտնվող ընկերների կամ բարեկամների միջոցով, ովքեր ոչ ֆորմալ կապ են ունեցել համակարգի հետ, հեռախոսագանգ են կատարել վարչակազմին կամ գողական հեղինակությանը: Նրանք խնդրել են տվյալ կալանավորին ուղարկել կա՛մ այնպիսի բանտախուց, որտեղ նա կլինի ծանոթ գողականների հովանու ներքո, կա՛մ բարձր կարգավիճակ ունեցող և լավ կենցաղային պայմաններով բանտախուց, կա՛մ այնպիսի բանտախուց, որտեղ փոքր է կոնֆլիկտի մեջ մտնելու հավանականությունը (սպաներին՝ սպաների, իսկ պետական պաշտոնյաներին՝ պաշտոնյաների համար նախատեսված բանտախցեր և այլն):

Հեռախոսագանգից հետո բաշխման վերաբերյալ որոշումը վարչակազմի կողմից կայացվում է գողական հեղինակությունների հետ խորհրդակցությամբ: Բանտախցի ճիշտ ընտրությունը և կալանավորների ճիշտ բաշխումը ադմինիստրացիային պետք է ազատի արտակարգ իրավիճակների կանխման հոգսերից և ապահովի նորեկի արագ ներգրավումը ոչ ֆորմալ հարաբերությունների մեջ: Դատվածություն չունեցող բանտարկյալը՝ պեռվախողկան, օրենքի համաձայն կարող է ուղարկվել միայն իր նմանների՝ պեռվախողկանների բանտախուց և չի կարող պահվել կրկնահանցագործների հետ միասին: Այնուամենայնիվ, պրակտիկան ցույց է տալիս, որ պեռվախողկանների շրջանում կան գողականներ, ովքեր ունեն հանված

դատվածություն կամ ապրում են հանցագործ կյանքով, սակայն մինչ այդ չեն ձերբակալվել. այդ պատճառով յուրաքանչյուր բանտախցում հաջողվում է տեղավորել նայողի՝ գողականների շարքից: Այդպիսով, բոլոր բանտախցերում, բացի ամենացածր կարգավիճակ ունեցողներից (թռածներ/միասեռակներ) նայողների կողմից իրականացվում է կենտրոնացված վերահսկողություն կարգապահության և մաքրության պահպանման, դրամահավաքների և տարածքի վերանորոգման հարցերի վերաբերյալ, այնպես որ վարչակազմը կարիք չի ունենում այդ ամենի մասին հոգ տանելու: Մի կողմից, այդպիսի մոտեցումը փոխհատուցում է բանտում առկա անձնակազմի և ռեսուրսների սղությունը, թույլ է տալիս լուծել կենցաղային խնդիրներ և իրականացնել ռեսուրսների վերաբաշխում հարուստներից աղքատներին՝ անունդի, ծխախոտի, սուրճի և այլ բարիքների ավելցուկներն այլ խցեր փոխանցելու միջոցով:

Մյուս կողմից, նույն մոտեցումը խորացնում և ինստիտուցիոնալացնում է բանտարկյալների միջև անհավասարությունը՝ ստեղծելով բարձր և ցածր կարգավիճակ ունեցող, աղքատ և հարուստ բանտախցեր, որոնց կենսապայմանները տատանվում են ծայրահեղ աղքատից մինչև եվրավերանորոգված՝ անլար ինտերնետով ապահովված:

Ամենակարևորն այն է, որ վարչակազմի ներգրավվածությունը ոչ ֆորմալ հարաբերություններում ստեղծում է կոռուպցիայի լայն հնարավորություններ: Հարցվողներից մեկի արտահայտությամբ՝ «ֆորմալ կանոնակարգի պահպանման պատրվակով վարչակազմը մեզ զրկում է նվազագույն բարիքներից, որպեսզի հետո վաճառի դրանք մեզ վրա»: Փաստացիորեն, ֆինանսական հնարավորություններ ունեցող ազատագրվածներին ստիպում են մեծ ծախսեր կատարել մինիմալ հարմարություններ ունենալու համար: Այդպես, կանոնակարգով նախատեսված շրջայցի՝ աբխոդի ժամանակ բանտախցերից մեկից առգրավվեց ապօրինի տեղադրված խմելու ջրի սարքը, իսկ հետագայում այն վերադարձվեց կաշառքի դիմաց: Մեկ այլ հարցվող պատմել է, որ կանոնակարգով նախատեսված գնման՝ շմոնի ժամանակ մի քանի անգամ իրենից «առգրավել են սմարթֆոնը, հետո գումարով հետ վաճառել այն»:

Կոռուպցիան տարածվում է նաև արգելված և անօրինական ապրանքների վրա: Բոլոր հարցվողները պատմել են «դատապարտյալների շրջանում օդի և մարիխուանա վաճառելու վարչակազմի ունեցած մենաշնորհի մասին, որը համաձայնեցված է պալատենեցիի հետ: Հարցվողներից մեկը պատմել է, որ բանտում նշել է իր ծննդյան օրը և ադմինիստրացիայից օդի է պատվիրել, շիշը 30 հազար դրամով: Բոլոր հարցվողներն ասել են, որ մարիխուանա ձեռք բերելը «Նուբարաշենում» խնդիր չէ:

Հիմնվելով հետազոտության տվյալների վրա՝ կարելի է առանձնացնել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի և գողական աշխարհի ներկայացուցիչների միջև փոխհարաբերության հետևյալ ձևերը.

1. Ոչ ֆորմալ գործողությունների վրա աչք փակելը, ներառյալ՝ մոլախաղերի, բջջային հեռախոսների օգտագործման, երկտողերի փոխանցման, բանտախցից բանտախուց ապրանքների և մթերքի փոխանցման վրա:
2. Ոչ ֆորմալ հիերարխիայի ամրապնդումը՝ բանտախցի կարգավիճակով պայմանավորված անհավասարության ապահովման միջոցով (կապված բանտախցերի գերբնակեցվածության, կենցաղային պայմանների, ռեսուրսների հասանելիության, հանդիպումների ու զբոսանքների հնարավորության և զննությունների հետ):
3. Որոշումների կայացման գործընթացում ոչ ֆորմալ հեղինակությունների ներգրավումը, այդ թվում՝ ազատագրվածներին բանտախցերով բաշխելու, խցից խուց տեղափոխելու և կոնֆլիկտները հարթելու հարցերում):

4. Ոչ ֆորմալ, գործողությունների մեջ ուղղակի ներգրավումը, այդ թվում՝ կոռուպցիայի. կաշառքի դիմաց կամ լավության կարգով ազատագրվածների համար ռեժիմի մեղմացում՝ անհատական ժամադրությունների և զբոսանքների ավելի հաճախակի կազմակերպման հնարավորության տեսքով, ինչպես նաև՝ տարատեսակ ապրանքների և ծառայությունների հասանելիության ապահովում ինչպես չարգելված (ծխախոտ, մթերք, սուրճ, շինանյութ), այնպես էլ արգելված (հեռախոս, ակոհոլ), և նույնիսկ՝ անօրինական (թմրանյութեր, մարմնավաճառություն) ապրանքների և ծառայությունների համար:

Ոչ ֆորմալ հարաբերությունների դրսևորումները կենսագործունեության տարբեր ոլորտներում

Կենցաղային պայմաններ

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում կենցաղային պայմանների հիմնական առանձնահատկությունը գերբնակեցվածությունն է: Բանտախցերում օրենքով պետք է պահվի 8 անձ 4 հատ երկհարկանի մահճակալների վրա: Մինչդեռ, ըստ հարցվողների, իրենց խցերում եղել է 6 մահճակալ, այսինքն՝ 12 տեղ քնելու համար, որոնք միմյանց հետ ստիպված են կիսելու շատ ավելի մեծ թվով մարդիկ: Հարցվողների խոսքերով՝ եղել է ժամանակ, երբ իրենց բանտախցում պահվել է ընդհուպ մինչև 23 հոգի: Հետազոտության թեմայի համատեքստում՝ այս իրավիճակը հանգեցնում է երկու կարևոր հետևանքների. առաջինը՝ օրվա ռեժիմի բացակայության, երկրորդը՝ քնելու տեղերի բաշխման հետ կապված ոչ ֆորմալ հարաբերությունների:

Երիտասարդ հարցվողներից մեկն պատմել է. «Ես մահճակալս կիսում էի մի ուրիշ տղայի հետ: Քնում էինք հերթով՝ ինչպես ստացվում էր: Ես չեմ կարող ասել, թե երբ և ինչքան եմ քնել, ցերեկը թե գիշերը: Ամեն մեկն ուներ իր սպիտակեղենը: Եթե քո մահճակալն ազատ է, փոում ես սպիտակեղենդ, պառկում և քնում: Եթե մահճակալը զբաղված է, բայց ուզում ես քնել, կարող ես խնդրել պառկել որևէ ազատ մահճակալի վրա: Որպես կանոն, հաջողվում է պայմանավորվել»: Տարիքով ավելի մեծ հարցվողն ասել է. «Ես ունեցել եմ իմ մահճակալը, որի վրա քնել եմ գիշերը, իսկ եթե ցերեկը որևէ մեկը խնդրում էր քնել, թույլ էի տալիս»:

«Բանտախցում ոտք դնելու տեղ չկա. ամենուր մահճակալներ են, դարակներ, սառնարան, սեղան»: Հարուստ կամ կարգավիճակով բարձր բանտախցերի գլխավոր արտոնություններից է դառնում մարդկանց սահմանափակ քանակը: «Երբ ես հասա այն բանին, որ ինձ տեղափոխեցին գողական բանտախոց, մենք այնտեղ ընդամենը 8 հոգի էինք, բոլորս կարող էինք միաժամանակ հաց ուտել. գետնին ամրացված նստատեղերով սեղանը նախատեսված էր 8 հոգու համար: Ամեն մեկն ուներ իր մահճակալը, և դա շքեղության զգացում էր առաջացնում: Հետո «Նուբարաշեն» բերեցին մեծ թվով մարդկանց, և խցերը սկսեցին խտացնել, այդ թվում՝ նաև մերը: Մեզ մոտ ամենաշատը եղել է 18 հոգի 12 քնելու տեղ»: Աղքատ, ցածր կարգավիճակ ունեցող բանտախցերից հարցվողներն ասում էին, որ 20 հոգուց պակաս իրենց մոտ երբևէ չի եղել:

Բանտախցերի միջև անհավասարությունը վերաբերում է նաև այլ կենցաղային խնդիրներին: Դատապարտյալներն իրենց ուժերով են ապահովում ցանկացած հարմարություն՝ բացի ամենաանհրաժեշտներից (փակ զուգարան և սառնարան): Հարկերում կան լոգարաններ՝ ցնցուղով, սակայն դրանք բավարար չեն, որպեսզի հնարավոր լինի ամեն օր լողանալ, ինչը, գերբնակեցվածության պայմաններում, կարևոր է: Հարուստ բանտախցերում բանտարկյալներն իրենք են զուգարանում տեղադրում ջրատաքացուցիչ և լողանում են հատակային զուգարանի վրա կանգնած: «Այդպես լողանալն անհարմար է, սակայն ամռանը հաջողվում է օրական երկու անգամ ցնցուղ ընդունել, ինչը շոգի պայմաններում անհրաժեշտ է»: Բոլոր հարցվողների բանտախցերում եղել է հեռուստացույց և էլեկտրական սալօջախ՝ կերակրի պատրաստման և տաքացման համար: Չի եղել ո՛չ խոհանոց, ո՛չ էլ լոգասենյակ: Որոշ բանտախցերում եղել է մեծ հեռուստացույց:

Հարցվողներից մեկի բանտախցում եղել է նաև անլար ինտերնետ, որը միացվել և վճարվել է ազատազրկվածների ուժերով:

Հիգիենայի, մաքրության պահպանումը և նույնիսկ բանտախցերի վերանորոգումն ամբողջությամբ դատապարտյալներն են հոգում: Բոլոր հարցվողներն ազատազրկված լինելու ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ վերանորոգել են իրենց խուցը՝ փոխել են զուգարանի սալիկները, ներկել են հատակը և պատերը: Դատապարտյալները գումար են հավաքել և գնել շինանյութ, վարչակազմի հետ պայմանավորվել դրա առաքման վերաբերյալ. նման ծառայության համար լրացուցիչ վճարելու անհրաժեշտությունը կախված է բանտախցի կարգավիճակից և դրա բնակիչների ֆինանսական հնարավորություններից: «Եթե բանտախցում կան հարուստ մարդիկ, օրինակ՝ բիզնեսմեններ, ապա ամեն ինչի համար փող են վերցնում»: Ազատազրկվածներն իրենք են իրականացնում վերանորոգումը, իսկ վարչակազմն այդ հարցերին չի խառնվում:

Նման իրավիճակի հետևանքներից մեկը կալանավորների ժամանակավոր կացության համար նախատեսված տարածքների՝ այսպես կոչված կառանտինի վատ պայմաններն են: Հարցվողների խոսքերով՝ կառանտինում չափից դուրս կեղտոտ է: Նրանցից մեկի խոսքերով՝ «Նուբարաշենում» իր գտնվելու ընթացքում կառանտինը մի անգամ վերանորոգվել էր, սակայն շատ կարճ ժամանակ անց նորից անմխիթար վիճակում հայտնվեց:

Մնունդ

Հարցվողներից ոմանք, այդ թվում նաև՝ անապահով ընտանիքներից, ասել են, որ գրեթե չեն օգտվել բանտային կերակուրից, այլ կերել են այն, ինչ իրենց կամ խցակիցներին բերել են հանձնուքով: Որոշ հարցվողներ նշել են, որ բանտային կերակուրը վատորակ է կամ ընդհանրապես ուտելու ենթակա չէ: Հարցվողներից երկուսը ասել են, որ երբևէ չեն համտեսել բանտային կերակուրը, քանի որ դա «ամոթ էր համարվում»: Թեև սնունդը բերում էին օրական երեք անգամ, բայց ոչ ոք չէր վերցնում: Ընդ որում, այդպես է եղել նաև աղքատ բանտախցում նստած հարցվողներից մեկի մոտ:

Այլ հարցվողների խոսքերով՝ իրենց խցում բանտային կերակուր ուտում էին քիչ թվով կալանավորներ, հիմնականում մարզերի աղքատ ընտանիքներից եկած, ինչպես նաև՝ հարազատներ չունեցող կամ նրանց հետ կապ չունեցող մարդիկ: Այդպիսի բանտարկյալներն օգտվում էին նաև բանտի լվացքատան ծառայություններից և ընդհանրապես չունեին ֆինանսական միջոցներ: Խցակիցները սովորաբար նրանց հետ կիսվում էին ուտելիքով, սուրճով և ծխախոտով: Հարցվողներից միայն մեկն է (մի երիտասարդ՝ աղքատ ընտանիքից) պարբերաբար օգտվել բանտային կերակուրից:

Երբեմն աղքատ բանտախցեր վերևի խցի ճաղերից իջեցնում էին սննդամթերքով, ծխախոտով, սուրճով և այլ բարիքներով հյուրասիրության կապոց: Սակայն սննդի հիմնական աղբյուրը մնում էր ընտանիքը. հարազատները շաբաթը մի քանի անգամ ազատազրկվածներին բերում էին ուտելիք, և երբեմն, հարցվողների խոսքերով, բանտախցում այնքան շատ ուտելիք էր հավաքվում, որ դրանով կիսվում էին այլ խցերի հետ՝ փոխանցելով ճաղավանդակներից կոնի տեսքով կամ վերահսկողի միջոցով՝ կաշառքի դիմաց կամ առանց կաշառքի՝ կախված բանտախցի կարգավիճակից և վերահսկողի հետ ունեցած անձնական հարաբերություններից:

Բացի այդ, բանտարկյալներին տնից բերում էին մաքուր սպիտակեղեն և հագուստ, իսկ կեղտոտը տանում էին լվանալու: Ընտանիքների համար դա դառնում է և՛ հոգս, և՛ ծախսեր է պահանջում:

Ծախսեր

Ազատագրկվածներին դրսից փող են փոխանցում, թեև օրենքով դա թույլատրված չէ: Գումարն օգտագործվում է բջջային հեռախոսների լիցքավորման և այլ կարիքների բավարարման նպատակով, որոնք տարբեր անձանց մոտ տարբերվում են՝ կախված բանտախցից և անձնական նախընտրություններից: Համեմատաբար հարուստ բանտախցերից մեկում, հարցվողի խոսքերով, յուրաքանչյուրից ամսական 25 հազար դրամ էին հավաքում վարչակազմին կաշառելու նպատակով, որպեսզի վերահսկողները շմոնի ժամանակ աչքերը փակեին հեռախոսների, խաղաքարտերի և այլ արգելված իրերի վրա, և ընդհանուր առմամբ իրենց չծանրաբեռնեին պահանջներով և արգելքներով: Բացի այդ, տվյալ բանտախցում պարբերաբար գումար էին հավաքում գրեֆի համար, որը փոխանցվում էր պալատենեցին իր հայեցողությամբ ծախսեր իրականացնելու նպատակով: Զննությունների ժամանակ վերահսկողներին հավելյալ գումար էին վճարում: Առանձին վճարում էին առավել հաճախ անձնական տեսակցություններ ունենալու կամ դեմ առ դեմ տեսակցության համար:

Հարուստ բանտախցում եղած հարցվողը պնդում էր, որ «Նուբարաշենում» անցկացրած մեկ տարին իր ընտանիքի վրա մոտ 5 հազար դոլար է արժեցել՝ ներառյալ հանձնույթները, որոնցով նա կիսվում էր խցակիցների հետ և նրան փոխանցվող փողը՝ նախատեսված կաշառքի, գրեֆի և այլ ծախսերի համար (ընդ որում, տվյալ հարցվողը խաղաքարտ չէր խաղում): Մյուս հարցվողները չկարողացան ասել, թե որքան գումար է ծախսվել, քանի որ իրենց փոխարեն հարազատներն են վճարել, բայց բոլորն անխտիր ազատագրկման վայրում ծախսեր են կատարել:

Ավելի աղքատ բանտախցերում դրամահավաք չէին իրականացնում, վարչակազմի հետ հարաբերությունները կարգավորվում էին անձնական կապերի մակարդակում կամ ենթարկվում էին ավելի խիստ սահմանափակումների, քան ավելի հարուստ բանտախցերում ապրողները: Շատ բան կախված էր բանտախցի գողական կարգավիճակից. աղքատ, բայց բարձր կարգավիճակ ունեցող խցերում գնումներն իրականացվում էին շատ ավելի մակերեսային, և ընդհանուր առմամբ, վարչակազմը նրանց ավելի մեղմ էր վերաբերվում: Ինչպես բացատրեց հարցվողներից մեկը՝ «Եթե նրանք սկսեին ձեռքներիցս ամեն արգելված իր վերցնել, ապա գործը կարող էր հասնել խռովության՝ բունտի, մեր բանտախցում լուրջ տղերք կային, և բանտի ղեկավարությունը դա հասկանում էր»: Բացի այդ, վերահսկողներից գնում էին ծխախոտ, ալկոհոլ և մարիխուանա: Այն մասին, թե ով և ինչպես է գնում և օգտագործում ծանր թմրանյութեր, հարցվողներից ոչ մեկ չկարողացավ (կամ չցանկացավ) պատմել:

Բժշկական օգնություն

Բանտում առկա է բուժակի ծառայություն, սակայն, հարցվողների խոսքերով, տրամադրվում են միայն ամենաեժան դեղամիջոցները. «Եթե դու քեզ վատ ես զգում, քեզ տալիս են անալգին կամ դիմեդոլ»: Մի հարցվող ներկա է գտնվել իր տարեց խցակցի մահվանը, որը, ենթադրաբար, սրտի հիվանդություն ուներ: Նա բազմիցս դիմել էր բժշկական օգնության համար, սակայն այդպես էլ բժիշկ չկանչեցին: Մեկ այլ հարցվող տեսել է, թե ինչպես է բուժակը երակները կտրելու փորձ կատարած ազատագրկվածներից մեկին վիրակապում: Մյուս հարցվողները բժշկական ծառայության մատուցման դեպքերի չեն հանդիպել:

Հետազոտության տվյալներով՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում բժշկական ծառայությունների անհասանելիությունը ոչ միայն ռեսուրսների սակավության, այլև՝ ոչ ֆորմալ հարաբերությունների հետևանք է: Հիվանդանոցում գտնվելը համարվում է հարուստների և գողականների արտոնություն: Մովորական ազատագրկվածի համար հիվանդանոցում հայտնվելը համարվում է գրեթե անհնար: «Կենտրոնական հիվանդանոցն առողջարան է գողականների համար: Այնտեղ նստելն ավելի հարմարավետ է և ազատ, այնտեղ հայտնվում են ծանոթության

կամ փողի միջոցով»: Հարցվողներից մեկը պնդում էր, որ Դատապարտյալների հիվանդանոցում հայտնվելու համար պետք է վճարել 1000-1500 դոլար, և քո առողջական վիճակը ոչ մի դեր չի խաղում:

Մուլխաղեր

Հետազոտության տվյալներով՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածները փողով խաղում են տարբեր մուլխաղեր: Խաղաթղթերը, նարդին և ցանկացած խաղ, որում օգտագործվում են զառեր, օրենքով արգելված են, և դրանք կարող են առգրավել զննումների ժամանակ (կարող են նաև աչք փակել), սակայն դատապարտյալները փողով խաղում են նաև շախմատ, շաշկի և դոմինո: Խաղալ կարելի է ինչպես կանխիկ փողով, այնպես էլ՝ պարտքով, ինչը մեծացնում է ռիսկերն անփորձ և մոլի խաղացողների համար: Խաղերը կարգավորվում են պռագոնով. պեռվախողկանների համար մեկ խաղի հաղթանակի գումարը պետք է չգերազանցի 200 հազար դրամը, ընդ որում, դրա մի մասը պետք է ուղարկել պալատենեցին:

Հարցվողներից ոչ մեկ ներկա չի գտնվել այնպիսի իրավիճակի, երբ որևէ մեկին պարտադրում են փողով խաղալ: Այնուամենայնիվ, մուլխաղերին բանտում նպաստում է պարապույթունը և ձանձրույթը: Ինչպես նշել են հարցվողները, գերբնակեցված բանտախցում միշտ աղմկոտ է, միացրած է հեռուստացույցը, զրույցներ են վարվում հեռախոսով, և կենտրոնանալ, օրինակ, կարդալու վրա, շատ դժվար է: Բացի այդ, փորձված խաղացողներին՝ հատկապես բարձր կարգավիճակ ունեցող գողականներին, հաճախ հաջողվում է թասիքի գցել անփորձ երիտասարդներին, ինչը կարող է ունենալ վատ հետևանքներ:

Հարցվողներից մեկը բանտում մոլի խաղաթուղթ խաղացող դարձած երիտասարդ էր: Նա շախմատում կարգ է ունեցել, որի մասին ոչ մեկին չի պատմել, սակայն ազատազրկման ողջ ընթացքում նրա հետ ոչ մեկ շախմատ չի ցանկացել խաղալ: Նա կարծում է, որ շախմատիստ լինելու մասին լուրը գողականներին էր հասել նրանց տեղեկատվական խողովակներով: Խաղաթուղթ խաղալ նա լավ չգիտեր, սակայն սկզբում շատ էր հաղթում. հնարավոր է, որ նման ձևով փորձառու խաղացողները նրան մեջ մոլուցք էին արթնացնում: Արդյունքում նա սկսեց խաղալ անընդհատ և ազատազրկված լինելու մեկուկես տարվա ընթացքում, իր խոսքերով, պարտվեց մոտ 20 հազար դոլար:

Հարցվողների խոսքերով՝ բանտախցերում շատ են խաղում և մեծ գումարներ են պարտվում, իսկ փողի շրջանառությունը կարող է ամբողջությամբ իրականացվել բանտի պատերից դուրս, և ընդհանրապես, չվերահսկվել վարչակազմի կողմից: Բանտային խաղային պարտքերի մարման և բանտի ու գողական աշխարհի միջև գումարի շրջանառման համար օգտագործվում են համապատասխան տարադրամի փոխանակման կետեր. «Ընկերները կամ բարեկամները գնում են նշված փոխանակման կետ, և վճարում են պարտվածը: Գումարը բանտ բերելու կարիք չկա»:

Ազատության մեջ գտնվող ընտանիքի համար մուլխաղերի վտանգն ավելի է մեծանում, քանի որ պարտքով խաղալու հնարավորություն կա, իսկ պարտվելու դեպքում վճարելու պարտավորությունն ընկնում է ընտանիքի ուսերին: Պարտքը չվճարողը ստանում է ֆուֆլիժնիկի պիտակ, որը կարող է հանգեցնել կարգավիճակի ցածրացման գաղութում հայտնվելիս: Հարցվողներից ոչ մեկը նման իրավիճակի չի բխվել, քանի որ ընտանիքները վախենում են ազատազրկվածի վիճակը վատթարացնելուց:

Չբոսանքներ

Հաշվի առնելով բանտախցերի գերբնակեցվածությունը, ծխելու արգելքի բացակայությունը և, հարցվողների խոսքերով, վատ օդափոխությունը՝ մաքուր օդին զբոսնելու հնարավորությունը

սկզբունքային նշանակություն ունի ազատագրկվածների առողջության համար: Բանտային կարգի համաձայն՝ ազատագրկված անձինք ամեն օր զբոսանքի իրավունք ունեն: Իրականում, զբոսանքի հասանելիությունը ևս կարգավորվում է ոչ ֆորմալ հարաբերություններով: Իր դերն է խաղում ռեսուրսների սահմանափակությունը՝ զբոսանքների համար նախատեսված փոքր և անբարեկարգ տարածքը, սակայն արհեստականորեն ստեղծվող անհավասարությունը ևս զգալի է: Հարցվածներից շատերը ազատագրկման ընթացքում ընդհանրապես դուրս չեն եկել զբոսանքի կամ դուրս են եկել մեկ-երկու անգամ: Եթե ոմանք, իրենց խոսքերով, սեփական կամքով են հրաժարվել զբոսանքներից, ապա ուրիշները, գտնվելով ցածր կարգավիճակ ունեցող բանտախցերում, ընդհանրապես կամ գրեթե հնարավորություն չեն ունեցել զբոսանքի դուրս գալու: Միաժամանակ, բարձր կարգավիճակով բանտախցում ապրող հարցվողը, համաձայն իր խոսքերի, զբոսանքի էր դուրս գալիս ամեն օր:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքներն ամփոփելով՝ կարելի է պնդել, որ ոչ ֆորմալ հարաբերություններն ու գործունեությունը զգալիորեն ազդում են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատագրկվածների կյանքի վրա: Ոչ ֆորմալ հարաբերություններին թույլ տալով զարգանալ ու ամրապնդվել, և բանտային կյանքի կազմակերպման ընթացքում դրանց վրա հենվելով՝ վարչակազմին հաջողվում է լուծել մի շարք խնդիրներ, և ինչպես ցույց տվեց հետազոտությունը, առաջին հերթին կանխել բռնության դրսևորումները, ինչը բանտում չափազանց կարևոր է: Միաժամանակ, այդ հարաբերությունները նպաստում են ինչպես ազատագրկվածների միջև անհավասարության, որը ինստիտուցիոնալացված է որպես անհավասարություն բանտախցերի միջև, այնպես էլ կոռուպցիայի դրսևորումների: Ընդհանուր առմամբ, այդ ամենը բանտում ստեղծում է այնպիսի բարոյական մթնոլորտ, որը ոչ միայն չի նպաստում ազատագրկվածների ուղղմանը, այլև՝ ընդհակառակը, երիտասարդների մոտ ստեղծում է տպավորություն, որ գողական օրենքը միակ հուսալի հենարանն է կյանքում: